**Արձանագրություն N 2**
**«ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**
# Протокол н. 2
**Заседания оценочной комиссии процедуры закупки под кодом EQ-GHKhAShDzB-26/5**

ք. Երևան — 16.01.2026թ., ժամը՝ 09:30
г.Ереван — 16.01.2026г., Время: 09:30
Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտի փողոց 1), 127 սենյակ
Место заседания: мерия г. Ереван (ул. Аргишти 1), комната 127

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հայրապետյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Օհանյան /գնահատող /, Ա. Փանոսյան /գնահատող/, Ն. Հովեյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյան /բացող /, Ն. Ախպարյան /բացող/
Ս. Պապյան

Участвовали:
Председатель комиссии: М. Айрапетян
Члены комиссии: А. Оганян, А. Паносян, Н. Овеян, А. Авагян, Н. Ахпарян
Секретарь комисии: С. Папян

1. **Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/5» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին**
**Информация о вскрытии заявок на закупку с кодом «EQ-GHKhAShDzB-26/5»**
---------------------------------------------------------------------------
(Մ. Հայրապետյան , М. Айрапетян)

Ընդունվել է ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2026 թվականի հունվարի 14-ին, ժամը 09:30-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Отметить, что заявки на процедуру закупки были открыты через сайт www.armeps.am во время, определенное приглашением, **14.01.2026 года в 09:30**, в мэрии Еревана, адрес Аргишти 1.

*Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:*
*Принято решение: за -6, против – 0:*

2. **«ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/5» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**
**На процедуру закупки подали заявки следующие участники**
---------------------------------------------------------------------------
(Մ. Հայրապետյան , М. Айрапетян)

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.
2.1 На процедуру закупки подали заявки следующие участники:

| h/h | Մասնակիցների անվանումը<br>Имена участников | Հասցե<br>Адрес |
|---|---|---|
| 1 | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ<br>ООО "ШИН-КОМФОРТ" | ք. Գավառ, Ազատության 35/33<br>г. Гавар, Азатутян 35/33 |
| 2 | «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ<br>ООО "ШИН НАХАГИЦ" | ք. Երևան, Գ. Նժդեհ 23/6<br>г. Ереван, Г. Нжде 23/6 |
| 3 | «ԼՈՒՔ» ՍՊԸ<br>ООО "ЛУК" | ք. Երևան, Միկոյան 13, բն. 42<br>г. Ереван, Микоян 13, кв. 42 |
| 4 | «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ<br>ООО "Т.А.Х.Г. ГРИГ" | ք. Երևան, Թոթովենցի 12/28<br>г. Ереван, Тотовенц 12/28 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:*
*Принято решение: за -6, против – 0:*

## 3. Մասնակցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
## О ценовых предложениях, представленных участниками

---

(Մ. Հայրապետյան , М. Айрапетян)

3.1 Ընթացակարգի մասնակցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

3.1 Участниками были представлены следующие ценовые предложения:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանում Название предмета закупки | Գնման գին Цена покупки | Հ/Հ | Մասնակիցների անվանումները Имена участников | Արժեք стоимость | ԱԱՀ НДС | Ընդհանուր գինը цена |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Երևան քաղաքի թիվ 42 մսուր-մանկապարտեզի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ Консультационные работы по подготовке проектно-сметной документации для реконструкции детского сада № 42 в Ереване | ***15 417 570*** | 1 | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ ООО "ШИН-КОМФОРТ" | 10770800 | 2154160 | 12924960 |
| | | | 2 | «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ООО "ШИН НАХАГИЦ" | 12000000 | 2400000 | 14400000 |
| | | | 3 | «ԼՈՒՔ» ՍՊԸ ООО "ЛУК" | 12416600 | 2483320 | 14899920 |
| | | | 4 | «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ ООО "Т.А.Х.Г. ГРИГ" | 13800000 | 0 | 13800000 |
| 2 | Երևան քաղաքի թիվ 128 մսուր-մանկապարտեզի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ Консультационные работы по подготовке проектно-сметной документации для реконструкции детского сада № 128 в Ереване | ***10 893 960*** | 1 | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ ООО "ШИН-КОМФОРТ" | 7625000 | 1525000 | 9150000 |
| | | | 2 | «ԼՈՒՔ» ՍՊԸ ООО "ЛУК" | 8916600 | 1783320 | 10699920 |
| | | | 3 | «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ООО "ШИН НАХАГИЦ" | 9000000 | 1800000 | 10800000 |
| | | | 4 | «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ ООО "Т.А.Х.Г. ГРИГ" | 9200000 | 0 | 9200000 |
| 3 | Երևան քաղաքի թիվ 142 մսուր-մանկապարտեզի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ Консультационные работы по подготовке проектно-сметной документации для реконструкции детского сада № 142 в Ереване | ***11 485 425*** | 1 | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ ООО "ШИН-КОМФОРТ" | 8125000 | 1625000 | 9750000 |
| | | | 2 | «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ООО "ШИН НАХАГИЦ" | 9000000 | 1800000 | 10800000 |
| | | | 3 | «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ ООО "Т.А.Х.Г. ГРИГ" | 9200000 | 0 | 9200000 |
| | | | 4 | «ԼՈՒՔ» ՍՊԸ ООО "ЛУК" | 9333300 | 1866660 | 11199960 |

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:
3.2 В ценовом предложении представленных участниками нет арифметических неточностей.

*Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:*
*Принято решение: за -6, против – 0.*

## 4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
## Сведения о наличии необходимых документов и об их соответствии установленным требованиям

-----------------------------------------------------------------------------------------------------------------

(Մ. Հայրապետյան , М. Айрапетян)

4.1 **Գնահատող հանձնաժողովը, մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.**

1. **«ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ**

1.1. Հրավերի պահանջների «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների անձնագրերը ներկայացված են թերի,
- բացակայում է ճարտարապետի որակավորում ունեցող Վաչագան Ավետիսյանի կողմից հաստատված գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ,
- ներկայացված չէ մասնագետների աշխատանքային փորձը հավաստող որևէ փաստաթուղթ (աշխատանքային գրքույկ, տեղեկանք գործատուից կամ ՊԵԿ-ից և այլն):

1.2. Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի վերաբերյալ ներկայացված փաստաթուղթը չի բավարարում հրավերի 2.4.1 կետի պահանջներին (պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է գնման գնից), ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել առնվազն 2 (երկու) նմանատիպ պայմանագիր:

2. **«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ**

2.1 Հրավերի պահանջների «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- չի ներկայացվել հրավերի Հավելված 1.4-ը,
- բացակայում են հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների կողմից հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ,
- չեն ներկայացվել մասնագետների անձնագրերի պատճենները, որակավորումը հավաստող փաստաթղթերը (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն),
- բացակայում են աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերը (աշխատանքային գրքույկ, տեղեկանք գործատուից կամ ՊԵԿ-ից և այլն):

2.2 Չի ներկայացվել նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի չափանիշը հիմնավորող որևէ փաստաթուղթ:

3. **«ԼՈՒՔ» ՍՊԸ**

3.1 «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն.

- բացակայում են հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետներ Լիլիթ Գրիգորյանի և Սյուզաննա Աբովյանի որակավորումը հավաստող փաստաթղթերը,
- հրավերով սահմանված է, որ ինժեներ-կոնստրուկտոր որակավորում ունեցող մասնագետները պետք է ունենան Բարձրագույն դասի, ենթադաս «Ա» արտոնագիր, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ մասնագետների արտոնագրեր՝ ենթադաս «Ա1»-ով, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

4. **«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ**

4.1. Հրավերի պահանջների «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- չի ներկայացվել հրավերի Հավելված 1.4-ը,
- բացակայում են հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում ներգրավվելու վերաբերյալ,
- չեն ներկայացվել մասնագետների անձնագրերի պատճենները, որակավորումը հավաստող փաստաթղթերը և աշխատանքային փորձը հավաստող որևէ փաստաթուղթ:

4.2. Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը չեն բավարարում հրավերի 2.4.1 կետի պահանջներին, մասնավորապես՝ Պայմանագիր Ն-261124-2 (Արթիկ, Սարատակ) վերաբերյալ բացակայում է Հանձման-ընդունման ակտը, մնացած պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է գնման գնից:

4.3 Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահանջներով, որոշեց կասեցնել նիստը և ծանուցել նշված մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում **/ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

4.4 Մասնակիցների կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» և «Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի» որակավորման չափանիշները հիմնավորելու նպատակով ներկայացված **լրացուցիչ մասնագետի և հավելյալ ներկայացված** նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի արձանագրված անհամապատասխանությունը շտկվելու դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով: Տվյալ անհամապատասխանության չշտկումը չի հանդիսանա հայտի մերժման հիմք, այլ կանդրադառնա ոչ գնային պայմաններին տրված ընդհանուր գնահատականի վրա, քանի որ նշված մասնակցի կողմից ներկայացված հայտում արդեն իսկ առկա է հրավերի **2.4.1 կետում ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ»** և նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի **չափանիշիներին համապատասխանող հիմնական աշխատակազմ և նմանատիպ պայմանագրեր:**

4.1 В результате изучения документов, представленных участниками, были выявлены следующие несоответствия:

1. ООО «ШИН-КОМФОРТ»

1.1. В документах, подтверждающих квалификационный критерий «Трудовые ресурсы», установленный требованиями приглашения, выявлены несоответствия, в частности:

- паспорта специалистов, привлечённых в основной персонал, представлены не в полном объёме,
- отсутствует письменное согласие архитектора Вачагана Аветисяна, обладающего соответствующей квалификацией, на участие в выполнении предполагаемых работ,
- не представлены какие-либо документы, подтверждающие трудовой стаж специалистов (трудовая книжка, справка от работодателя или из Комитета государственных доходов и т.п.).

1.2. Документ, представленный в отношении ранее выполненного аналогичного договора, не соответствует требованиям пункта 2.4.1 приглашения (объём выполненных работ в рамках договора в денежном выражении меньше цены закупки), а также необходимо представить не менее 2 (двух) аналогичных договоров.

2. ООО «ШИН НАХАГИЦ»

2.1. В документах, подтверждающих квалификационный критерий «Трудовые ресурсы», предусмотренный требованиями приглашения, выявлены несоответствия, в частности:

- не представлен Приложение 1.4 приглашения,
- отсутствуют письменные согласия специалистов, привлечённых в основной персонал, на участие в выполнении предполагаемых работ,
- не представлены копии паспортов специалистов, документы, подтверждающие их квалификацию (диплом, свидетельство, сертификат и т.п.),
- отсутствуют документы, подтверждающие трудовой стаж (трудовая книжка, справка от работодателя или из Комитета государственных доходов и т.п.).

2.2. Не представлен ни один документ, подтверждающий соответствие критерию ранее выполненных аналогичных договоров.

3. ООО «ЛУК»

3.1. Документы, представленные с целью обоснования квалификационного критерия «Трудовые ресурсы», являются неполными:

- отсутствуют документы, подтверждающие квалификацию специалистов основного персонала Лилит Григорян и Сюзанны Абовян,
- приглашением установлено, что специалисты с квалификацией инженера-конструктора должны иметь лицензию Высшей категории, подкласс «А», тогда как участником представлены лицензии как основных, так и дополнительных специалистов с подклассом «А1», что не соответствует требованиям приглашения.

4. ООО «Т.А.Х.Г. ГРИГ»

4.1. В документах, подтверждающих квалификационный критерий «Трудовые ресурсы», установленный требованиями приглашения, выявлены несоответствия, в частности:

- не представлено Приложение 1.4 приглашения,

- отсутствуют письменные согласия специалистов, привлечённых в основной персонал, на участие в выполнении предполагаемых работ,
- не представлены копии паспортов специалистов, документы, подтверждающие их квалификацию, а также какие-либо документы, подтверждающие трудовой стаж.

4.2. Ранее выполненные аналогичные договоры не соответствуют требованиям пункта 2.4.1 приглашения, в частности: по договору № H-261124-2 (Артик, Саратак) отсутствует акт приёма-передачи, а по остальным договорам объём выполненных работ в денежном выражении меньше цены закупки.

4.3 На основании вышеизложенного, оценочная комиссия, руководствуясь требованиями пункта 41 Порядка, утвержденного Постановлением Правительства РА № 526-Н «Об организации процесса закупок» (далее — Порядок), приняла решение приостановить проведение сессии и уведомить указанных участников о необходимости исправить выявленные несоответствия в течение срока, указанного в приглашении (в течение одного рабочего дня со дня получения уведомления).

В случае неисправления несоответствий в установленный срок, заявка участника будет признана неудовлетворительной и отклонена.

4.4 В случае устранения зафиксированных несоответствий, выявленных в отношении дополнительного специалиста и дополнительно представленного аналогичного ранее выполненного договора, представленных участниками с целью обоснования квалификационных критериев «Трудовые ресурсы» и «Ранее выполненные аналогичные договоры», неценовые условия будут оцениваться в порядке, установленном приглашением.

Неустранение данного несоответствия не будет являться основанием для отклонения заявки, а повлияет на общую оценку, присваиваемую неценовым условиям, поскольку в заявке, представленной данным участником, уже имеется основной штат специалистов и аналогичные ранее выполненные договоры, соответствующие квалификационным критериям «Трудовые ресурсы» и «Ранее выполненные аналогичные договоры», предусмотренным пунктом 2.4.1 приглашения.

*Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:*
*Принято решение: за -6, против – 0.*

## 5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
## Об утверждении даты, времени и места проведения следующего заседания оценочной комиссии закупочной процедуры

(Մ. Հայրապետյան , М. Айрапетян)

5.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, ք. Երևան, Արգիշտի 1, 1-ին հարկ 120 սենյակ հասցեում:

5.1 Оценочная комиссия решила созвать следующее заседание на следующий рабочий день после оценки представленных участниками исправленных документов, но не позднее, чем в течение пятнадцать рабочих дней со дня истечения срока подачи заявок, по адресу мэрии г. Еревана, ул. Аргишти 1.

*Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:*
*Принято решение: за -6, против – 0.*

Հանձնաժողովի Նախագահ՝
Председатель комиссии: ____________ Մ. Հայրապետյան М. Айрапетян

____________ Ա. Օհանյան А. Оганян

Անդամներ՝
Члены комиссии: ____________ Ա. Փանոսյան А. Паносян

____________ Ն. Հովեյան Н. Овеян

____________ Ա. Ավագյան А. Авагян

____________ Ն. Ախպարյան Н. Ахпарян

Համակարգող՝
Секретарь комиссии: ____________ Ս. Պապյան С. Папян